10414

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ՀԱՄ ԼԿՅԵՄ ԿԵՆՏ. ԿՈՄԻ 1937 Թ. ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ

1 DEC 2000
24 SEP 2006

# ՀՐԱՀԱՆԳ

## ՀԱՄ. ԼԿՅԵՄ ԱՆԴԱՄ ՅԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### 1. ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

*1. Համ. ԼԿՅԵՄ կանոնադրության 48-րդ կետի համաձայն Համ. ԼԿՅԵՄ անդամ և թեկնածուների համար ամսեկան անդամավճարների հետևյալ չափն է սահմանվում.*

*Ամսեկան մինչև 100 ռ. աշխատավ. ստացող. վճարում են — ռ. 20կ.*

| | | | | |
|---|---|---|---|---|
| *101 ռ. մինչև 150 ռ.* | » | » | » | — ռ. 60կ. |
| *151 ռ. մինչև 200 ռ.* | » | » | » | 1 ռ. — կ. |
| *201 ռ. մինչև 250 ռ.* | » | » | » | 1 ռ. 50կ. |
| *251 ռ. մինչև 300 ռ.* | » | » | » | 2 ռ. — կ. |

*300 ռ. բարձր մինչև 500 ռ. վճարում են աշխատավարձի 2%-ը, 500 ռ. բարձր աշխատավարձի 3%-ը:*

3276
39

*2. Անդամավճարների ընդունման ժամանակ հաշվի յե առնվում կոմյերիտականի ինչպես հիմնական աշխատավարձը, այնպես էլ նրա վողջ լրացուցիչ աշխատավարձը (աշխատանքի համատեղության, արտաժամյա աշխատանք, գրական հոնորար, դասախոսական, մանկավարժական և նման այլ աշխատանք, աշխատավարձի հավելում յերկարամյա ծառայության համար, միության հեռավոր վայրերում աշխատող կոմյերիտականների աշխատավարձի հավելումը):*

*Համ. ԼԿՅԵՄ անդամ և թեկնածուների աշխատավարձին չպետք է ավելացնել կոմյերիտականների ստացած պարգևատրությունները, միանվագ նպաստությունները, նպաստները և պետական փոխառության պարտատոմսերի շահումները:*

*3. Կոմյերիտական գիտական աշխատողները, գրողները, ճարտարապետները, գյուտարարները և արվեստի աշխատողները (նկարիչներ, քանդակագործներ, դերասաններ, կինո աշխատողներ) անդամավճարները մուծում են ընդհանուր կարգով, այսինքն սույն հրահանգի 1-ին և 2-րդ կետերի համաձայն:*

*Կոլտնտեսական կոմյերիտականները, վորոնք աշխատավարձ են ստանում գրամով և նատուրայով վաստակած աշխօրերի գծով, անդամավճար են մուծում ամսեկան 50 կոպեկի չափով:*



ՀԱՅ. ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ

01.06.2013 10414

Կոլտնտեսական կոմյերիտականները, վորոնք բացի աշխօրերից ստանում են աշխատավարձ (կոլտնտեսության նախագահներ, հաշվապահներ, հաշվետարներ, գյուղատնտեսներ, զոոտեխնիկներ, տրակտորիստներ, կոմբայնավարներ և այլն), 50 կոպեկին լրացուցիչ վճարում են ամսեկան անդամավճար դրամական աշխատավարձից, համաձայն սույն հրահանգի 1-ին և 2-րդ կետերի:

Կոլտնտեսական կոմյերիտականները, արտադրական արտելների անդամները, վորոնք բացի աշխօրերից ստանում են մշակած և հանձնած մթերքների համար դրամական վարձատրություն, 50 կոպեկին լրացուցիչ վճարում են անդամավճար ամսեկան միջին աշխատավարձի չափի հաշվով, համաձայն սույն հրահանգի 1-ին և 2-րդ կետերի:

Տնայնագործական-արտադրական արտելների անդամ կոմյերիտականները, վորոնք աշխատավարձ են ստանում միայն դրամով վոչ թե նատուրայով, անդամավճար են մուծում փաստորեն ստացած աշխատավարձի չափով ընդհանուր կարգով, այսինքն սույն հրահանգի 1-ին և 2-րդ կետերի համաձայն:

Կարմիր բանակային կոմյերիտականները ամսեկան անդամավճար են մուծում 10 կոպեկի չափով, իսկ ժամկետային ծառայության մեջ գտնվող կրտսեր հրամանատարները՝ 20 կոպեկի չափով:

Ուսանող կոմյերիտականները, թոշակառուները, ժամանակավոր անաշխատունակները, վորոնք ստանում են նպաստ սոցապից կամ կոոպերատիվ ապահովագրությունից, անդամավճար են մուծում ընդհանուր հիմունքներով, ստացվող թոշակի, նպաստի և այլ կարգի վարձատրությունների չափի համապատասխան (տես սույն հրահանգի 1-ին կետը):

Ուսանող կոմյերիտականները, վորոնք չեն ստանում թոշակ և տնային տնտեսուհիները ամսեկան անդամավճար են մուծում 20 կոպեկի չափով:

Մանկատների կոմյերիտական սաները, վորոնք ստանում են աշխատավարձ, անդամավճար են մուծում ընդհանուր հիմունքներով համաձայն 1-ին կետի, աշխատավարձ չստացողներն ազատված են անդամավճար մուծելուց:

Համ. ԼԿՅԵՄ անդամները, վորոնք միաժամանակ հանդիսանում են Համ. Կ(բ)Կ անդամ կամ թեկնածու, կոմյերիտմիության անդամավճար մուծելուց ազատված են:

4. Համ. ԼԿՅԵՄ կանոնադրության 50-րդ կետի համաձայն,



Համ. ԼԿՅԵՄ անդամ կամ թեկնածու ընդունվելիս մուտքի վճար է գանձվում ամսեկան անդամավճարի կրկնակի գումարի չափով:

Մուտքի վճարներն ընդունում են անձամբ ԼԿՅԵՄ շրջկոմի, քաղկոմի քարտուղարը կամ Համ. ԼԿՅԵՄ շարքերն ընդունվածին կոմյերիտական փաստաթղթերը հանձնող կոմյերիտմիության գծով քաղ. բաժնի պետի տեղակալը:

## 2. ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

5. Ամեն մի Համ. ԼԿՅԵՄ անդամ և թեկնածու անդամավճարներն անձամբ մուծում է կոմյերիտական կոմիտեյի կամ կոմյերիտական սկզբնական կազմակերպության քարտուղարին, վորում նա հաշվի յե առնված. անդամավճարների ընդունումը կատարվում է անձամբ կոմյերիտական կոմիտեյի քարտուղարի կողմից (կամ կոմյերիտական սկզբնական կազմակերպության քարտուղարի կողմից):

Համ. ԼԿՅԵՄ անդամ և թեկնածուները, վորոնք ժամանակավորապես գնացել են սկզբնական կոմյերիտական կազմակերպությունից կարճատև դասընթացներ, պաշտոնական գործուղում և այլն, անդամավճարները մուծում են այն կոմյերիտական կազմակերպությանը, վորում ժամանակավորապես հաշվի յեն առնված:

Կոմյերիտական կոմիտեների քարտուղարները և կոմյերիտական սկզբնական կազմակերպությունների քարտուղարներն իրավունք չունեն անդամավճար ընդունելու կազմակերպությունը նոր յեկած կոմյերիտականներից մինչև նրանց ԼԿՅԵՄ շրջկոմում մշտական կամ ժամանակավոր հաշվառման յենթարկելը:

Խոշոր կոմյերիտական սկզբնական կազմակերպություններում, վորտեղ կոմյերիտականների թիվը 100-ից անց է, կոմյերիտական անդամավճարների ընդունումը կարող է թույլատրվել ցեխային, սեկտորային, ֆակուլտետային և նման կոմյերիտական կազմակերպությունների կազմակերպիչներին, յուրաքանչյուր դեպքում պետք է լինի ԼԿՅԵՄ քաղկոմ-շրջկոմի հատուկ վորոշումը:

6. Կոմիտեյի քարտուղարը, կոմյերիտական սկզբնական կազմակերպության քարտուղարը (ցեխի կազմակերպիչը) անդամավճարների ընդունման ժամանակ Համ. ԼԿՅԵՄ անդամ և թեկնածուների կոմյերիտական տոմսում կամ թեկնածուական քարտում անդամավճարների մուծման մասին դնում է կնիք (շտամպ)

և իր ստորագրությամբ, գրանցել անդամավճարների մուծման տեղեկագրում (ձև № 1) յուրաքանչյուր Համ. ԼԿՅԵՄ անդամ և թեկնածուից ստացված անդամավճարը։

Անդամավճարների մուծման մասին կնիքի (շտամպի) ձևը սահմանվում է ԼԿՅԵՄ շրջկոմի, քաղկոմի կողմից և այդ կնիքը (շտամպը) պետք է ունենա կոմերիտական սկզբնական կազմակերպության համարը, որպիսին սահմանվում է ԼԿՅԵՄ շրջկոմի, քաղկոմի կողմից։

7. Անդամավճարների մուծման ցուցակի մեջ են մտցվում հաշվետու ամսի սկզբից (այբբենական կարգով) բոլոր Համ. ԼԿՅԵՄ անդամ և թեկնածուները, որոնք հաշվի յեն առնված տվյալ կոմերիտական կազմակերպությունում, ցույց տալով վերջին ամիսը, որի համար մուծված է լրիվ անդամավճարը յուրաքանչյուր կոմերիտականի կողմից։

Հետևյալ սյունակները լրացվում են անդամավճարների ընդունման ժամանակ։

Համ. ԼԿՅԵՄ անդամ և թեկնածուների նկատմամբ, որոնք որևէ պատճառով չեն մուծել անդամավճարները հաշվետու ամսում, կոմերիտական կոմիտեյի քարտուղարի (սկզբնական կոմերիտական կազմակերպության քարտուղարի) կողմից արվում է համապատասխան նշում, ցույց տալով, թե որ ամիսների (բացի հաշվետու ամսից) համար է մնում պարտք և որքան։

## 3. ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ, ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8. Կոմերիտական կոմիտեների քարտուղարները (ցեխային կազմակերպիչները), կոմերիտական սկզբնական կազմակերպությունների քարտուղարները ստացված անդամավճարները տասնօրյակում մեկ անգամից ոչ պակաս հայտարարության հետ միասին (ձև № 2) պետք է մուծեն մոտակա խնայդրամարկղի բաժանմունքը՝ պետական բանկ. մարզկոմի, յերկկոմի, ազգային ԼԿՅԵՄ ԿԿ-ի ընթացիկ հաշվին փոխանցելու համար։

Կոմերիտական կոմիտեների քարտուղարները և գյուղական կոմերիտական սկզբնական կազմակերպությունների քարտուղարները հավաքված անդամավճարներն ամիսը մեկ անգամ հանձնում են մոտակա խնայդրամարկղի բաժանմունքը։

Անդամավճարների մուծման ցուցակները և անդամավճարները խնայդրամարկղ մուծելու մասին փաստաթղթերը մնում են և պահվում կոմերիտական սկզբնական կազմակերպության կոմիտեյում կամ ԼԿՅԵՄ շրջկոմում։



Ցեխային կոմերիտական կազմակերպիչներն անդամավճարների մուծման ցուցակները պարտավոր են հանձնելու կոմիտեի քարտուղարին ոչ ուշ քան հետևյալ ամսի 5-ը, հավաքված դրամները խնայդրամարկղ մուծելու մասին փաստաթղթերի հետ միասին։

Յուրաքանչյուր հաշվետու ամսի վերջին կոմերիտական կոմիտեյի քարտուղարները, կոմերիտական սկզբնական կազմակերպության քարտուղարները կազմում են ամփոփ հաշվետվություն (ձև № 3) նախորդ հաշվետու ամսում ստացված անդամավճարների մասին և ներկայացնում են ԼԿՅԵՄ շրջկոմ, քաղկոմ ոչ ուշ հաջորդ հաշվետու ամսվա 10-ը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ա) Հյուսիսային ծայրամասի շրջաններում և մյուս շրջաններում, որտեղ վատ հաղորդակցության հետևանքով դժվարանում է 8-րդ կետում նախատեսնված պահանջների կատարումը, գանձված անդամավճարների հանձնման ժամկետները և կարգը սկզբնական կոմերիտական կազմակերպություններում որոշվում են մարզկոմների, յերկրային կոմիտեների և ԼԿՅԵՄ ազգային ԿԿ-ի կողմից։

բ) Ցեխային, ֆակուլտետային, տեղամասային և նույնանման կոմերիտական կազմակերպությունների քարտուղարները հավաքված անդամավճարները ոչ պակաս տասնօրյակում մեկ անգամ հանձնում են կոմերիտական կոմիտեյի քարտուղարին կամ կոմերիտական կոմիտեյի որոշմամբ անմիջականորեն խնայդրամարկղ։

9. ԼԿՅԵՄ շրջկոմները, քաղկոմները կազմում են ամփոփ հաշվետվություն, կոմերիտական սկզբնական կազմակերպություններից ստացված անդամավճարների գանձման մասին և ամեն ամսվա հաշվետվությունների հիման վրա կազմում են շրջանային, քաղաքային կոմերիտական կազմակերպության նախորդ ամսվա ամփոփ հաշվետվություն (ձև № 3) և այդպիսին ներկայացնում են մարզկոմ, յերկրային կոմիտե, ԼԿՅԵՄ ազգային ԿԿ, ոչ ուշ քան հաշվետու ամսվա հաջորդ ամսի 15-ը։

Սկզբնական կոմերիտական կազմակերպություններից ըս-

տացված տեղեկություններից բացի ցույց է տրվում նաև անդամավճարների գումարը, որը մուծված է ընթացիկ հաշվին շրջանում, քաղաքային պիտրանկի բաժանմունքում խնայողական դրամարկղների կողմից:

ԼԿՅԵՄ քաղկոմ-շրջկոմներում յուրաքանչյուր կոմյերիտական սկզբնական կազմակերպության համար տարվում է առանձին հաշվառման քարտ անդամավճարների մուծման մասին (ձև № 4), որոնք կանոնավոր կերպով լրացվում են յուրաքանչյուր ամիսը լրանալուց հետո, լրացվում են սկզբնական կոմյերիտական կազմակերպությունների կողմից անդամավճարների գանձման մասին տված հաշվետվությունների հիման վրա:

Անդամավճարների ընդունման, պահպանման, հանձնման և հաշվետվությունների կազմելու կարգը ԲԳԿԲ, ՆԳԺԿ-ի սահմանապահ և ՆԵՐՔԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ զորամասերի կոմյերիտական կազմակերպություններում, ձեռնարկների հաղորդակցության ժողովրդական կոմիսարիատի կոմյերիտական կազմակերպություններում սահմանվում է ԲԳԿԲ քաղ. վարչության, ՆԳԺԿ-ի սահմանապահ ու ներքին պահպանության զորամասերի և ճանապարհների հաղորդակցության ժողովրդական կոմիսարիատի քաղբաժինների կողմից:

## 4. ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

10. ԼԿՅԵՄ մարզկոմները, յերկրային կոմիտեները և ազգային կենտկոմները, շրջկոմներից և քաղկոմներից ստացված հաշվետվությունների հիման վրա իրենց մոտ տանում են հաշվառում կոմյերիտական անդամավճարների գանձման մասին (ձև № 4) ըստ առանձին շրջանային և քաղաքային կոմյերիտական կազմակերպությունների ստուգում են քաղկոմ, շրջկոմների հաշվետվությունները կոմյերիտմիության բյուջեյի ընթացիկ հաշվին մուծված անդամավճարները, գումարներով կազմում են վողջ մարզային, յերկրային կոմյերիտական կազմակերպության ամփոփ հաշվետվությունը և ներկայացնում Համ. ԼԿՅԵՄ ԿԿ վոչ ուշ քան հաջորդ հաշվետու ամսի 20-ը:

Մարզկոմները, յերկրային կոմիտեները, ԼԿՅԵՄ ազգային ԿԿ պարտավոր են լսել առանձին ԼԿՅԵՄ շրջկոմների, քաղկոմների հաշվետվությունները, նրանց տարած աշխատանքի մասին, անդամավճարների ընդունման գործի ղեկավարման ուղղությամբ և յուրաքանչյուր վեց ամսյակում մեկ անգամից վոչ պակաս քննարկել ֆին սեկտորների վարիչների հաշվետվությունը անդամավճարների գանձման դրության մասին մարզում, յերկրում, հանրապետությունում:

11. ԼԿՅԵՄ քաղկոմ-շրջկոմները պարտավոր են հետևելու կոմյերիտականների կողմից իր ժամանակին անդամավճարների մուծման գործին, կոմյերիտական սկզբնական կազմակերպությունների կողմից գանձված կոմյերիտական անդամավճարների իր ժամանակին խնայդրամարկղ մուծելու գործին և ցույց տալ օգնություն կոմյերիտական կազմակերպություններին անդամավճարների ընդունման գործի ճիշտ կազմակերպման ուղղությամբ:

Յերեք ամիսը մեկ անգամից վոչ պակաս կոմյերիտական սկզբնական կազմակերպություններում, կոմյերիտական կոմիտեներում, կոմյերիտականների ընդհանուր կոմյերիտական ժողովներում պետք է քննարկեն և հաստատեն անդամավճարների գանձման արդյունքները, իսկ շրջանային և քաղաքային կոմյերիտական կազմակերպություններում ԼԿՅԵՄ շրջկոմ, քաղկոմները:

12. Շրջանային, քաղաքային, մարզային, յերկրային և ազգային ԿԿ-ի վերստուգիչ հանձնաժողովները պարտավոր են յեռամսյակում մեկ անգամից վոչ պակաս ստուգել Համ. ԼԿՅԵՄ անդամ և թեկնածուներից գանձվող անդամավճարների ճշտությունը, գանձված անդամավճարների խնայողական դրամարկղ իր ժամանակին փոխանցելը և ստացված անդամավճարների մասին ներկայացված հաշվետվությունների ճշտությունը:

Վերստուգիչ հանձնաժողովների կազմած արձանագրությունները անպայման պետք է քննարկվեն շրջկոմներում, քաղկոմներում, մարզկոմներում, յերկրային կոմիտեներում և ազգային ԿԿ-ում և նրանց քննարկումից հետո, համապատասխան ԼԿՅԵՄ կոմիտեյի վորոշման հետ միասին ուղարկվեն վերադաս կոմյերիտական կոմիտեյին:

Մարզային, յերկրային և հանրապետական կոմյերիտական կազմակերպությունների վերստուգիչ հանձնաժողովների արձանագրությունները պետք է ներկայացվեն կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովին:

## 5. ՇԵՖԱԿԱՆ ՅԵՎ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

13. Բոլոր Համ. ԼԿՅԵՄ անդամ և թեկ

թվում և Համ. Կ(բ)Կ շարքերում գտնվողնե

ՀՀ Ազգային գրադարան
NL0195492

ԼԿՑԵՄ կանոնադրության 49-րդ կետի, բացի ամենամսյա անդամավճար մուծելուց, վճարում են տարեկան ռազմա-շեֆական մուծում 20 կոպեկի չափով և ինտերնացիոնալ մուծում 10 կոպեկի չափով։

Ռազմա-շեֆական մուծումների վճարումից ազատվում են այն Համ. ԼԿՑԵՄ անդամ և թեկնածուները, վորոնք գտնվում են ԲԳԿԲ և Նավատորմի շարքերում։

Շեֆական և ինտերնացիոնալ մուծումների վճարումից ազատվում են մանկատների սաները, վորոնք չունեն ինքնուրույն աշխատանք։

Ռազմա-շեֆական և ինտերնացիոնալ մուծումների գանձման և հաշվառման կարգը (դրոշմանիշային սիստեմ) սահմանվում է Համ. ԼԿՑԵՄ ԿԿ-ի հատուկ հրահանգով։

## 6. ՄՈՒՏՔԻ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄ. ԼԿՑԵՄ ՇԱՐՔԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Համ. ԼԿՑԵՄ ԿԿ-ի Քարտուղարության 1937 թվի հունվարի 31-ի (արձանագրություն № 46) վորոշմամբ սահմանված մուտքի վճարը պետք է մուծել շրջկոմում կոմյերիտական տոմսը տալու ժամանակ։

Շրջկոմները գանձված գումարը փոխանցում են համապատասխան յերկրային կոմիտեյի, Համ. ԼԿՑԵՄ մարզկոմի կամ ԼԿՑԵՄ ազգային հանրապետության ԿԿ-ի ընթացիկ հաշվին։

Հայերեն հրատարակության պատասխանատու խմբագիր՝ Ս. Միքայելյան
Թարգմանիչ՝ Ալ. Դիլանյան
Տեխ. խմբագիր՝ Խ. Խաչատրյան
Սրբագրիչ՝ Կ. Պետրոսյան

ЗКСМ3
2-21

Պատվեր № 561, տիրաժ 2000, Մանկ. Ինստիտուտի տպարան Մարքսի, փող. № 17, Յերևան 1937 թ.